ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԸՍՏ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

ՅՈՒՐԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հայերի և հայոց լեզվի ծագման վերաբերյալ մինչ այժմ առաջ են քաշվել բազմաթիվ և բազմաբնույթ տեսակետներ ու վարկածներ, որոնց հիմքում ընկած են տարբեր գիտություններից վերցված փաստեր՝ դիցաբանությունից մինչև լեզվաբանություն: Ուսումնասիրություններից շատերը կարելի է համարել նաև բազմակողմանի, քանի որ դրանցում հիշյալ խնդիրները քննարկվում են մի քանի գիտակարգերի տվյալների համադրմամբ: Այն, որ հայերենը բնույթով հնդեվրոպական լեզու է, իսկ այդ լեզվի կրողներն էլ հնդեվրոպական ցեղերից են եղել, լեզվաբանական և հարակից այլ գիտությունները վաղուց են ապացուցել, և այստեղ տարակարծություններ չկան: Միևնույն ժամանակ, հնդեվրոպական լեզվաբանության սկզբնավրումից ի վեր, մինչ օրս տարբեր հետազոտողների կողմից վիճարկվում է հնդեվրոպացիների նախահայրենիքի կամ ընդհանուր հնդեվրոպական նախնական լեզվատարածքի խնդիրը, որը կարևոր նշանակություն ունի ոչ միայն հնդեվրոպացիների և հնդեվրոպական նախալեզվի, այլև առանձին ցեղակից լեզուների և դրանց կրողների ծագման ու ձևավորման հանգամանքների բացահայտման գործում: Նշենք նաև, որ տեսակետներից այսօր առավել հավանական է համարվում հնդեվրոպացիների փոքրասիական ծագման վարկածը, որը, կարծում ենք, բավականաչափ հիմնավորված է, և նույնիսկ նախկինում հնդեվրոպացիներին եվրոպական ծագում վերագրող ավանդական տեսակետի կողմնակիցներն այլևս այս դրույթը չեն ժխտում: Տարակարծությունները հիմնականում վերաբերում են այն հարցին, թե Փոքր Ասիայի հատկապես որ մասում են նախապես բնակվել հնդեվրոպական ցեղերը: Նշենք նաև, որ մեզանում այսօր առավել ընդունելի է համարվում այն տեսակետը, որ նրանք զբաղեցրել են Փոքր Ասիայի արևմտյան կամ Հայկական բարձրավանդակն ընդգրկող տարածքները, որը օտարազգի շատ գիտնականների կողմից միանշանակ չի ընդունվում: 20-րդ դարի սկզբներին՝ այսպես կոչված «նոստրատիկ լեզվաբանության» հիմնադրումից հետո, առաջ քաշվեց այն դրույթը, որ հնդեվրոպացիները, նախապես տարածված լինելով Առաջավոր Ասիայի հարավային տարածքներում, միասնություն են կազմել նաև այլ՝ ոչ հնդեվրոպական, մասնավորա-

պես՝ սեմական, կովկասյան և ուրալյան լեզուների կրողների հետ, իսկ ավելի ուշ առանձնանալով տեղափոխվել են դեպի հյուսիս: Գ. Ջահուկյանը, ելնելով այս տեսությունից, առաջ է քաշում հնդեվրոպական նախահայրենիքի վերաբերյալ երկու հնարավոր վարկած. 1) նախնական տարածք, երբ հնդեվրոպացիները նոր էին բաժանվել նոստրատիկ ընդհանրությունից, և 2) ուշ տարածք, երբ նրանք գտնվում էին ինտենսիվ տրոհման՝ հնդեվրոպական ժողովուրդների առանձնացման նախօրյակին: Ընդ որում՝ առաջինի համար նա ընդունում է Առաջավոր Ասիայում, իսկ երկրորդի համար՝ Եվրոպայում գտնվելու վարկածը[1]: «Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն» աշխատության մեջ մենք առաջինի համար հավանական ենք համարում Հյուսիսային Միջագետքը, իսկ երկրորդի համար՝ Փոքր Ասիայի կենտրոնական և արևելյան տարածքները: Այսինքն՝ նոստրատիկ ընդհանրությունից դուրս գալուց հետո հնդեվրոպացիները Հյուսիսային Միջագետքից տեղափոխվել են Փոքր Ասիայի կենտրոնական և արևելյան (կամ Հայկական բարձրավանդակի արևմտյան) հատվածներ, որտեղից էլ տեղի է ունեցել հնդեվրոպական ցեղերի գաղթը տարբեր ուղղություններով: Ընդ որում՝ նոստրատիկ ընդհանրության շրջանին մենք հատկացնում ենք մոտ 10.000 տարվա հնություն, իսկ երկրորդին՝ մոտ 6.000 տարվա: Այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչպես է տեղի ունեցել հնդեվրոպական միասնության քայքայումը, կամ երբ և ինչ հանգամանքներում են ձևավորվել առանձին հնդեվրոպական ժողովուրդները: Ակնհայտ է, որ հիշյալ միասնության քայքայումը միաժամանակ տեղի չի ունեցել, և տարբեր հնդեվրոպական ցեղեր տարբեր ժամանակաշրջաններում են առանձնացել: Ավանդական հնդեվրոպաբանությունն այս խնդրի լուծման համար կարևոր էր համարում լեզվական արձանագրությունների ժամանակագրությունը: Այսինքն՝ որքան վաղ է կոնկրետ լեզուն վկայվում գրավոր հուշարձաններով, այնքան շուտ են տվյալ լեզվի կրողները ձևավորվել որպես առանձին ժողովուրդ: Արդի գիտությունը, սակայն, այս մոտեցումը հիմնավոր չի համարում այն առումով, որ գրավոր փաստերի առկայությունը չի կարող ապացույց լինել այն բանի, որ տվյալ լեզուն ավելի հին է, քան ցեղակից մեկ այլ լեզու, որն այդպիսիք չի վկայում, քանի որ լեզուն կարող է գոյություն ունենալ նաև առանց գրի (ինչպես ամերիկահնդկացիական, պոլինեզյան և այլ լեզուները) և ծառայել միայն բանավոր հաղորդակցմանը: Այս դեպքում, բնականաբար, վերոհիշյալ խնդիրների լուծումը բարդանում է, և ուսումնասիրության այլ մեթոդների ու դրույթների ներդրման անհրաժեշտություն է առաջանում: Այս առումով մի շարք գիտնականներ (Հ. Ֆոգտ, Մ. Մայերթալեր, Գ. Ջահուկյան, Վ. Իվանով, Թ. Գամկրելիձե և ուրիշներ) այն տեսակետն են հայտնում, որ կոնկրետ լեզվի բարբառներում կարող են

[1] Տե՛ս **Գ. Ջահուկյան,** Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 75:

պահպանվել բազմաթիվ հնագույն ձևեր, որոնք ժամանակի ընթացքում շատ քիչ են փոխվել, և դրանց հիման վրա կարելի է դատողություններ անել այդ լեզվի հնության մասին: Սույն մոտեցման հիմնավորվածությունն ընդունելով հանդերձ՝ նշենք, որ այդպիսով, սակայն, առաջանում է տվյալ լեզվի բարբառներում հնատիպ ձևերի բացահայտման, ինչպես նաև ընդհանրապես առավել հնատիպ համարվող բարբառի կամ բարբառային յուրահատկությունների սահմանման սկզբունքների հարցը: Վերջինիս պարզաբանումը ենթադրում է լեզուների տիպաբանական քննություն, որը փաստական նյութը կարծես կտրում է տեսությունից, քանի որ նման վերլուծությունը կատարվում է ընդհանրացումների ու վերացարկումների հիման վրա, և այդպիսով առաջ քաշված վարկածի ապացուցողական ուժը նվազում է: Նշված խնդիրների լուծմանն առանձնապես չեն նպաստում նաև հարակից այլ գիտակարգերի՝ հնագիտության, ազգագրության, մարդաբանության և մյուսների համապատասխան դրույթներն ու վերլուծության մեթոդները:

Նախորդ դարի վերջերին տարածքային լեզվաբանության և մարդաբանության հիմնադրույթների, ինչպես նաև գենետիկական հետազոտությունների արդյունքների վերլուծությամբ փորձ արվեց հիշյալ խնդիրների լուծումը տանել հակառակ ուղղությամբ, որը ենթադրում էր կոնկրետ մարդաբանական խմբի աշխարհագրական տարածման և նրա լեզվական յուրահատկությունների համակցված վերլուծություն: Ընդ որում՝ «մարդաբանական խումբ» ասելով հասկանում ենք ավանդաբար ընդունված **մարդացեղ, ռասա** հասկացությունը՝ նկատի առնելով պատմանականորեն կազմավորված և ընդհանուր ժառանգական հատկանիշներով ծագման (սերման) միասնականությամբ բնութագրվող մարդկանց տարածքային խումբը: Այս դեպքում կարևոր են ոչ թե ավանդական մարդաբանության համար էական համարվող մարդու արտաքին և կազմաբանական տվյալները, այլ նրա կենսաբանական կամ գենետիկական առանձնահատկությունները, որոնք առաջնային նշանակություն ունեն համապատասխան ժառանգական հատկանիշների և դրանց՝ հետագա սերունդներին փոխանցելու հանգամանքների պարզաբանման տեսակետից: Միանգամից ասենք, որ թեև էթնիկական որոշակի խմբի գենետիկական առանձնահատկությունների և նրա լեզվի միջև ուղղակի կապ գոյություն չունի, սակայն հիշյալ խմբի ծագումնաբանության և լեզվի միջև որոշակի զուգահեռներ այնուամենայնիվ հնարավոր է բացահայտել: Ասվածը կարելի է պարզաբանել այն հանգամանքով, որ տարածքային առումով սերտ առնչությունները կարող են առաջացնել գենետիկական ընդհանրություններ, որոնք հետագայում փոխանցվում են սերնդեսերունդ և տեսանելի են ժամանակի մեջ: Ըստ ժամանակակից գենետիկական հետազոտությունների՝ մարդու ԴՆԹ-ի՝ այսպես կոչված «հապլոխմբի» կառուցվածքում մեկ նուկլեոտիդ բաղադրիչի փոխարինումը մյուսով կամ անկումը տեղի է ունե-

նում 2500 տարին մեկ անգամ, որի ընթացքում փոխվում է մոտ 100 սերունդ, իսկ համապատասխան գենային կառուցվածքով բնութագրվող էթնիկական խումբը կարող է կատարել նաև տարբեր տարածական տեղաշարժեր[2]: Որոշ գիտնականների կարծիքով, այժմ որքան հեռու է իր ծագման կենտրոնից տեղափոխված կոնկրետ մարդաբանական տիպը, այնքան շատ են նաև գենետիկական մուտացիաները՝ նկատի ունենալով ԴՆԹ-ի կառուցվածքի փոփոխության նշված ցուցիչը: Այսինքն, եթե, օրինակ, հնդեվրոպական ցեղերը մի քանի հազար տարի առաջ ունեցել են ընդհանուր ժառանգական և ժամանակի մեջ տեսանելի հատկանիշներ, ապա այսօր նրանց հետնորդների մեջ դրանց կողքին առկա են նաև այլ կարգի և նախնականից տարբեր գենային կառուցվածքներ: Ուստի պետք է եզրակացնել, որ այդ փոփոխությունների քանակի և որակի բացահայտմամբ կարելի է պարզել, թե ինչպիսի տեղաշարժ է կատարել տվյալ մարդաբանական խումբն իր ծագման կենտրոնից, և որքան է տևել այդ տեղաշարժը: Վերջինիս համար արդի հետազոտությունները ցույց են տալիս, որ, կախված տվյալ խմբի կացութաձևից (հավաքչություն, որսորդություն կամ հողագործություն), հնարավոր է սահմանել նաև նրա տեղաշարժի արագությունը: Ընդ որում՝ ենթադրվում է, որ նշված տեղաշարժն ավելի արագ է տեղի ունենում մարդկային խմբերի որսորդական զբաղմունքի և ավելի դանդաղ՝ հողագործության պայմաններում: Բացի այդ, երկրագործությունը, որը բերում է նաև նստակեցության, հանգեցնում է գենային բազմազանության կրճատմանը և այդպիսով տվյալ տարածքում ընդհանուր ժառանգական հատկանիշների ձևավորմանը[3]: Ապացուցվում է նաև, որ հողագործության զարգացման վաղ կենտրոններից մեկը եղել է Առաջավոր Ասիան, որտեղ առկա են համապատասխան բնակլիմայական պայմաններ: Հետևաբար, վերոհիշյալ դիտարկումները հաշվի առնելով, կարելի է ենթադրել, որ նոստրատիկ (կամ հեռավոր) ցեղակցությամբ բնութագրվող լեզուների կրողները (այդ թվում նաև հնդեվրոպական ցեղերը) նախապես զբաղեցրել են այս տարածքը: Այդ են վկայում նաև բազմաթիվ լեզվական զուգահեռները հնդեվրոպական, սեմական և կովկասյան լեզուների միջև, որոնք վերաբերում են հատկապես հողագործության բնագավառին[4]: Համապատասխան լեզվական փաստերի վերլուծությամբ մեր կողմից առաջ է քաշվել այն տեսակետը, որ հայերենը՝ որպես հնդեվրոպական բարբառ, սկսել է ձևավորվել դեռ նոստրատիկ ընդհանրության մեջ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այստեղ պահպանվել են բազմաթիվ սեմական անմիջական փոփոխություններ, որոնք վկայվում են նաև այնպիսի ցեղակից լեզուներում (ինչպես, օրինակ, ռոմանական և գերմանական լեզուներում), ո-

---

[2] Տե՛ս **Cavalli-Sforza L. L.**, Gene, Völker, Sprachen, München, 1999, էջ 46-51:
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 72-80:
[4] Տե՛ս **Գ. Ջահուկյան,** նշվ. աշխ., էջ 70-72:

ռոնց կրողներն ավելի վաղ են հեռացել այդ տարածքից, և հետևաբար դրանք հայերենում ավելի ուշ կատարված փոխառություններ չեն կարող համարվել[5]: Տվյալ դեպքում մեր մոտեցումն այն է, որ ցանկացած լեզվական ընդհանրություն միաժամանակ բնութագրվում է որոշակի բարբառային տարբերակվածությամբ: Այսինքն՝ նոստրատիկ ընդհանրության քայքայման և հնդեվրոպական միասնության ձևավորման փուլում արդեն տեսանելի են եղել այդ միասնությունը կազմող առանձին բարբառային խմբերի առանձնահատկությունները: Հիշյալ փաստերի հիման վրա ենթադրում ենք նաև, որ հնդեվրոպական լեզուների կրողները (այդ թվում նաև հայերը), նոստրատիկ ընդհանրությունից առանձնանալով, հաստատվել են Փոքր Ասիայի արևելյան և կենտրոնական տարածքներում, որտեղից էլ ռոմանական և գերմանական լեզուների կրողները մ. թ. ա. 5-4-րդ հազարամյակներում աստիճանաբար տեղափոխվել են դեպի Եվրոպա, արիացիները կամ հնդիրանական ցեղերը՝ հակառակ ուղղությամբ՝ դեպի իրենց ներկայիս բնակության վայրեր, իսկ հայերը կատարել են ավելի փոքր տեղաշարժ. հիշյալ տարածքից հեռանալով՝ զբաղեցրել են Հայկական բարձրավանդակի արևմտյան և արևելյան հատվածները: Ասվածը, կարծում ենք, հաստատում են նաև հնագիտական փաստերը[6]:

Այսուհանդերձ, սույն տեսակետը վարկած է, որն, անշուշտ, լրացուցիչ հիմնավորումների կարիք ունի: Այդ նպատակով, կրկին վերադառնալով գենետիկական հետազոտությունների արդյունքներին, փորձենք պարզել, թե որքանով կարող են դրանք նպաստել տվյալ տեսակետի հիմնավորմանը:

Առանձնապես չխորանալով գենետիկական հետազոտությունների մեթոդաբանության մեջ և նկատի ունենալով, որ, ըստ այդ հետազոտությունների, վերջնականապես ճշգրտված կարելի է համարել առանձին էթնիկական խմբերի գենային կառուցվածքների բնութագրական գծերը՝ նշենք, որ վերջիններիս հիման վրա գիտնականները կարողանում են սահմանել տարբեր ժողովուրդների միջև, այսպես կոչված, գենետիկական հեռավորություններ: Այդ փաստերով հիշյալ ոլորտի հետազոտողները եզրակացնում են, օրինակ, որ գենային կառուցվածքի R-ով նշանակվող հապլոխումբը բնորոշ է հնդեվրոպական ծագման ժողովուրդներին, E-ով նշանակվող խումբը՝ հարավային սեմական, իսկ J-ն՝ հյուսիսային սեմական ժողովուրդներին և այլն[7]: Ինչպես ցույց են տալիս համապատասխան հետազոտությունները, ներկայումս Եվրոպայում բնակվող և այստեղից բավական հեռու տարածված հնդեվրոպական ծագման ժողովուրդների միջև գենետիկական հեռա-

---

[5] Տե՛ս **Յու. Գաբրիելյան,** Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Եր., 2001, էջ 194-200:

[6] Տե՛ս **Renfrew C.,** Die Indoeuropäer - aus archeologischer Sicht, Spektrum der Wissenschaften, 2000, Heft 1, էջ 40-48:

[7] Տե՛ս **Menozzi P.,** The History and Geography of Human Gens, Princeton, 1994, էջ 47-61:

վորությունը մեծ չէ, ինչպես, օրինակ, հայերի և իսպանացիների միջև այդ ցուցիչն ընդամենը 0,14 է, իսկ հայերի և ռուսների միջև՝ 0,19, այն դեպքում, երբ նույն տարածքում բնակվող և տարբեր ծագման բասկերի և իսպանացիների միջև գենետիկական հեռավորությունը 0,25 է[8]:

Ըստ Ա. Նազարովայի և մյուսների տվյալների՝ ժամանակակից սեմական լեզուներով խոսողներից հրեաների և արաբների հետ հայերի գենետիկական հեռավորությունը նույնպես փոքր է (համապատասխանաբար՝ 0,16 և 0,18), եթե նկատի ունենանք, որ աֆրիկյան ժողովուրդների հետ այն բավական մեծ է՝ 0,45: Այստեղ թերևս միակ դժվար բացատրելի փաստն այն է, որ հայերի ու չեչենների միջև գենետիկական հեռավորությունը նկատելիորեն փոքր է՝ 0,08, այն դեպքում, երբ նրանց միջև ծագումնաբանական առնչություններ գոյություն չունեն: Որոշ հետազոտողներ, ելնելով հրեաների և չեչենների միջև նվազ գենետիկական հեռավորությունից (0,06), կարծում են, որ չեչեններն ավելի ուշ են դուրս եկել նոստրատիկ ընդհանրությունից, քան կովկասյան լեզուների կրողները, և այդպիսով ավելի երկար է եղել նրանց շփումը դեռևս հիշյալ ընդհանրության մեջ գտնվող սեմական և հնդեվրոպական որոշ ցեղերի (այդ թվում նաև հայերի) հետ: Ինչ վերաբերում է նրանց լեզվին, ապա նրանք, հայտնվելով իրենց ներկայիս բնակության վայրերում, յուրացրել են արդեն այդ տարածքներ տեղափոխված տեղաբնիկների կովկասյան լեզվաընտանիքին պատկանող լեզուն: Իսկ հետագայում հայերի և չեչենների՝ լեռնային պայմաններով բացատրվող մեկուսի դիրքը նպաստել է նրանց վաղ գենետիկական կապերի պահպանմանը: Նշենք նաև, որ հայկական բարբառների բազմազանությունը հիշյալ պայմաններով է բացատրում նաև հայ գիտնական Լ. Եպիսկոպոսյանը[9]: Այս խնդրին դեռ կանդրադառնանք ստորև, իսկ այստեղ ճշտենք, որ, առանց համապատասխան լեզվաբանական ուսումնասիրությունների, միայն մոլեկուլային գենետիկայի արդյունքները բավարար չեն նման եզրակացությունների համար, քանի որ լեզուներն ու նրանց կրողները լրիվ մեկուսացած չեն լինում և անպայման շփվում են մյուսների հետ: Վերջինս կարող է տարբեր փոխազդեցությունների պատճառ դառնալ, որի հետևանքով համապատասխան էթնիկական խմբի թե՛ լեզվական և թե՛ գենետիկական բնութագրերը կարող են որոշ չափով նաև փոխվել: Այս առումով ասենք, որ արդի լեզվաբանության տեսակետից լեզվական փոխազդեցության հետևանքով առաջացած, այսպես կոչված, «խաչավորված» լեզվավիճակներից, այնուամենայնիվ, կոնկրետ լեզվի ծագումնաբանական կամ ելակետային հատկանիշները կարելի է առանձնացնել ձեռքբերովի հատկանիշնե-

---

[8] Տե՛ս **Назарова А. Ф., Алхутов С. М.** Генетические расстояния 55 человеческих популяций. М., 2000, էջ 64-72:

[9] Տե՛ս **Епископосян Л. М.** Генетика ростовых процессов в армянской популяции. Ер., 2000:

րից պատմահամեմատական մեթոդի գործադրման միջոցով: Նման մոտեցում են ցուցաբերում նաև կենսաբանները, որոնց կարծիքով, ինչ-ինչ պատճառներով օտար գեների ներթափանցմամբ կոնկրետ էթնիկական խմբի գենետիկական ժառանգականության հիմնական գծերը իսպառ չեն անհետանում[10]:

Այսպիսով, ինչպես նշվեց, ըստ համապատասխան գենետիկական հետազոտությունների, հաստատվում է հայերի նվազ գենետիկական հեռավորությունը հնդեվրոպական լեզուների, ինչպես նաև նոստրատիկ գերընտանիքին հատկացվող լեզուների կրողների միջև: Այս իրողության հաշվառումով արդի մի շարք հայ և օտարազգի գիտնականներ փորձել են ճշգրտել հայերի գենոֆոնդը և դրա ձևավորման հանգամանքները: Այդ գործում կարևոր նշանակություն է տրվում հայերի ժամանակակից և հին խմբերի ուսումնասիրությանը՝ ելնելով վերոհիշյալ այն դրույթից, որ կոնկրետ էթնիկական խմբի առաջնային գենետիկական հատկանիշները ժամանակի ընթացքում հիմնականում պահպանվում են: Հիմք ընդունելով Հայկական բարձրավանդակում հնագիտական պեղումներով ձեռք բերված ու տարբեր դարաշրջաններից վկայված ոսկրանյութի բաղադրության վերլուծությունները և համեմատելով դրանք ժամանակակից հայերի համապատասխան տվյալների հետ՝ հայ գիտնական Ն. Քոչարը ցույց է տվել, որ անտիկ շրջանից սկսած՝ ժամանակակից հայերի և նրանց հնադարյան խմբերի գենետիկական բնութագրերը համարյա չեն փոխվել, որն ապացուցում է բոլոր համեմատվող խմբերի չափազանց սերտ ազգակցական կապը[11]: Այս տվյալները կարևոր են այն առումով, որ եթե ուսումնասիրվում է պեղված ոսկրանյութը, ապա մենք չգիտենք, թե հայտնաբերված անհատն իր մահից հետո փոխանցել է արդյոք իր գեները հաջորդ սերունդներին, իսկ ժամանակակից մարդուն ուսումնասիրելիս հաստատ գիտենք, որ նրա գեները ժառանգվել են իր նախնիներից: Վերոհիշյալը այդպիսով ժխտում է հայերի խառնածին բնույթի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետը, ըստ որի հայերը որևէ ժառանգական համասեռություն չեն ցուցաբերում: Նույն կերպ, հետազոտելով տարբեր տարածքներում բնակվող հայկական խմբերի գենետիկական առանձնահատկությունները, Լ. Եպիսկոպոսյանը հանգել է այն եզրակացությանը, որ նրանք, անկախ իրենց աշխարհագրական տարածումից, էթնիկական և ռասայական առումով միատարր են[12]: Ասվածը հաստատում են նաև Վ. Ներսիսյանի կատարած արյան իմունոլոգիական ուսումնասիրությունները, որոնց հիման վրա գիտնականը եզրակացնում է, որ, արյան բոլոր հատկանիշներից ելնելով, կարող ենք արձանագրել բոլոր հայկական

---

[10] Տե՛ս **Cavalli-Sforza L.,** նշվ. աշխ., էջ 54-59:

[11] Տե՛ս **Ն. Քոչար,** Արմենոիդ ռասայական տիպի ծագումնաբանական խնդիրները Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, №1, էջ 287-300:

[12] Տե՛ս **Епископосян Л. М.** Когда генетика и история сталкиваются. Ер., 2008.

խմբերի միատեսակ բնույթը[13]: Լեզվաբանության տեսակետից հատկապես հետաքրքիր է այն փաստը, որ վրաց գիտնական Վ. Կաշիբիձեի գենետիկական հետազոտությունների արդյունքներով հարավկովկասյան տարածքում ներկայումս բնակվող ժողովուրդներից առավել սերտ են հարաբերությունները հայերի և հույների միջև[14], իսկ Ն. Քոչարը նման սերտ գենետիկական կապեր տեսնում է հայերի և կիպրոսաբնակ հույների միջև: Վերջինս այդ իրողությունը բացատրում է այն հանգամանքով, որ մարդկության պատմության տեսակետից ոչ հեռու անցյալում Կիլիկիայի թագավորությունն ու Կիպրոս կղզին աշխարհագրական առումով մոտ են եղել և փոխադարձ խաչասերումների հավանականությունը մեծ է եղել, ուստի գենետիկական նմանությունը հայերի և հույների միջև բավական տրամաբանական է[15]: Ելնելով, սակայն, վերը հիշատակված այն դրույթից, որ թե՛ գենետիկական և թե՛ լեզվական խաչավորումներից նոր տեսակներ ու լեզուներ չեն առաջանում, մենք այդ երևույթի պատճառ ենք համարում ավելի վաղ շրջանում հայերի և հույների ընդհանուր ծագումնաբանությունը: Այս դրույթը հաստատվել է նաև հնդեվրոպական լեզվաբանության արդյունքներով, ինչպես, օրինակ, Ա. Մեյեն, Գ. Զոլտան, Վ. Պորցիգը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ, համեմատելով հայերենի և մյուս հնդեվրոպական լեզուների տարաբնույթ փաստերը, եկել են այն եզրակացության, որ հնդեվրոպական լեզվաընտանիքում հայերենն առավել սերտ առնչություններ ունի հունարենի հետ[16]: Նշված փաստերը խոսում են այն մասին, որ դեռ նախահնդեվրոպական շրջանից հայերն ու հույները երկար ժամանակ գոյատևել են նույն տարածքում (Առաջավոր Ասիայում), և, ի տարբերություն մյուս եվրոպական լեզուների կրողների, հույներն ավելի ուշ են հեռացել այդ տարածքից, որն ապացուցում է նաև նրանց գեներում տվյալ տարածքին բնորոշ J հապլոխմբի առկայությունը: Իսկ քանի որ այդ համագոյակցությունը տևել է երկար ժամանակ, ապա նրանց միջև գենետիկական հեռավորությունն էլ պետք է նվազ լիներ: Կարծում ենք՝ այս փաստը ավելի հիմնավոր է, քան հայ-հունական գենետիկական և լեզվական սերտ առնչությունները խաչավորմամբ բացատրելը: Ինչ վերաբերում է հայ-հունական վաղ շրջանի միասնության ժամանակագրությանը, ապա այն, ըստ գերմանացի լեզվաբան Վ. Պորցիգի, գոյություն է ունեցել մինչև մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկիզբները[17]:

Լեզվական և գենետիկական փաստերի համադրմամբ թերևս կա-

---

[13] Տե՛ս **Нерсесян В. М.** Распределение антигенов системы HLA в популяции армян // «Генетика», т. 38, 7, 2002, էջ 1001-1005:

[14] Տե՛ս **Кашибадзе В. Ф.** Одонтология армян // «Биологический журнал Армении», т. XLIII, 4, 1990, էջ 285-295:

[15] Տե՛ս **Ն. Քոչար,** նշվ. աշխ., էջ 295-297:

[16] Տե՛ս **Գ. Ջահուկյան,** նշվ. աշխ., էջ 300-308:

[17] Տե՛ս **Порциг В.** Членение индоевропейской языковой области. М., 1964, էջ 47-61:

րելի է ճշտել նաև հայերի և ուրարտացիների փոխհարաբերության հարցը: Հիշենք, որ Ուրարտուի և ուրարտացիների վերաբերյալ միասնական մոտեցում մինչ այժմ գոյություն չունի, իսկ այն տեսակետը, որ հայկական ցեղերը, գրավելով Ուրարտու պետությունն, իրենց են ձուլել նաև ոչ հնդեվրոպական ծագման ուրարտական լեզուների կրողներին, վերը ներկայացված դրույթի համաձայն, պետք է համարել վիճելի: Ամեն դեպքում ենթադրյալ Ուրարտուի տարածքում (որն ըստ էության համընկնում է հայերի պատմական և ներկայիս բնակության վայրերի հետ) հնագիտական պեղումների միջոցով ձեռք բերված մարդկային կմախքների ու ոսկրանյութի հետազոտությունները ցույց են տալիս, որ, թե՛ ըստ մարդաբանական տիպի և թե՛ ըստ գենետիկական առանձնահատկությունների, ուրարտացիների և հայերի միջև նկատելի տարբերություններ չկան[18]: Լեզվական առումով «ուրարտու» անվանումը հանդիպում է միայն ասուրական սեպագիր արձանագրություններում, իսկ ուրարտական համարվող վկայություններում այդ անվանման փոխարեն հանդիպում է Բիայնիլի անունը, որի -լի մասնիկը դիտվում է որպես հոգնակի թվի վերջավորություն, և հայերենում այն պետք է հնչվեր «Վան»: Վերջին տարիներին կատարված լեզվաբանական հետազոտությունները[19] ևս հաստատում են, որ ուրարտերեն համարվող լեզուն ըստ էության ներկայացնում է հայերենի հնագույն վիճակը: Հետևաբար վիճելի է դառնում նաև այն տեսակետը, որ խուռաուրարտական լեզուները կապ չունեն հնդեվրոպական լեզուների հետ, և դրանք պետք է համարել այլ լեզվախումբ: Անդրադառնալով խուռիներին՝ նշենք, որ նրանց լեզուն ներկայացված է մ. թ. ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսից, իսկ ուրարտերենը՝ մ. թ. ա 9-6-րդ դարերից, թեև ուրարտացիները ասուրական աղբյուրներում հիշատակվում են ավելի վաղ: Միևնույն ժամանակ, եթե համեմատում ենք խուռերենի, ուրարտերենի և հայերենի փաստերը, տեսնում ենք, որ թեև բառամթերքի տեսակետից նրանց միջև որոշակի ընդհանրություններ կան, սակայն այդպիսիք բացակայում են նրանց ձևաբանական ու քերականական համակարգերում[20]: Այսուհանդերձ, ելնելով այն բանից, որ ընդհանուր լեզվամտածողության արտահայտման տեսակետից կարևոր դեր ունի նախադասության կառուցվածքը, ապա նկատում ենք, որ խուռերենը ցուցաբերում է մյուսներից տարբեր շարահյուսական կազմություն[21]: Այս փաստը ևս, կարծում ենք, բացառում է խուռաուրարտական միաս-

---

[18] Տե՛ս Տ. Ալեքսեևայի, Մ. Գապիերիի, Վ. Կրոգմանի, Ա. Նազարովայի, Վ. Ասլանաշվիլիի, Ն. Քոչարի և այլոց համապատասխան հետազոտությունները:

[19] Տե՛ս **Գ. Ջահուկյան,** Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին, Պատմա-բանասիրական հանդես, 2000 թ., №1, էջ 124-129, **Ա. Մովսիսյան,** Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, Եր., 1998 թ., **Յու. Գաբրիելյան**, նշվ. աշխ., և այլ աշխատություններ:

[20] Տե՛ս **Յու. Գաբրիելյան,** նշվ. աշխ., էջ 198:

[21] Տե՛ս **Մ. Խաչիկյան,** Առաջավոր Ասիայի հին լեզուների՝ խուռերենի, ուրարտերենի, էլամերենի տիպաբանական ուսումնասիրության հիմնախնդիրները, Եր., 1999:

նության հնարավորությունը թե՛ ժամանակագրության և թե՛ լեզվական առնչությունների տեսակետից: Նշենք նաև, որ խուռիները պատմականորեն եղել են Միտաննի պետության հիմնական բնակիչները, որոնց լեզվում առկա է նաև հնդկական բաղադրիչ, և Hurry անվանումն էլ խուռական ցեղերի ինքնանվանումն է, իսկ մյուսները նրանց անվանել են «միտաննիներ», ինչպես «հայը» մեր ինքնանվանումն է, իսկ «արմենը»՝ օտարի: Հետևաբար՝ դժվար է խուռիներին և ուրարտացիներին (հայերին) նույն ծագումը վերագրել, մանավանդ որ խուռերենն իր առանձնահատկություններով առավելապես նման է սեմական (արամեական) լեզուներին: Ուստի, բոլոր փաստերի հաշվառումով, խուռերենը կարելի է համարել նոստրատիկ ծագման, և հայերենի հետ ունեցած նրա որոշ նմանությունները բացատրել այդ ընդհանրությամբ: Ասվածը, ցավոք, գենետիկական հետազոտություններով ամրագրել չենք կարող և ելնում ենք հիմնականում պատմական ու լեզվական տվյալներից: Նման իրավիճակում թերևս որոշակի նշանակություն կարող են ունենալ նաև մարդաբանական փաստերը: Այսպես, օրինակ, բազմաթիվ հետազոտողներ այն կարծիքն են հայտնել, որ խեթերը հայկական ցեղեր են եղել, իսկ խեթերենն էլ հայերենի հնագույն վիճակ է ներկայացնում[22]: Ավստրիացի հնագետ և մարդաբան Ֆ. Լուշանն էլ կարծում է, որ, ըստ գանգի կառուցվածքի, խեթերի և հայերի միջև նմանություններն ակնհայտ են, և դեռ այսօր էլ տարբեր տարածքներում բնակվող հայերը բնութագրվում են գանգի կառուցվածքի նույն տիպով: Նա գտնում է, որ չնայած խեթերի և սեմական ցեղերի՝ նույն տարածքում երկարամյա համագոյակցությանը, նրանց գանգի և դեմքի կառուցվածքի բնորոշ գծերը տարբեր են եղել, որը նրանց հետնորդների մոտ պահպանվել է մինչև օրս: Այդպիսով, որպես խեթերի հետնորդներ Լուշանը համարում է հայերին, և անկախ այլ ցեղերի հետ բազմաբնույթ շփումներից, նրա կարծիքով, նրանց կազմաբանական առանձնահատկությունները որևէ կերպ չեն փոխվել[23]: Այս առումով Լ. Եպիսկոպոսյանը նշում է, որ հայերի գենոֆոնդն աչքի է ընկնում առավել պահպանողականությամբ, որն արտահայտվում է օտար ծագման գենետիկական տարրի դուրսմղմամբ[24]: Այս երևույթը արդի գիտնականները բացատրում են տվյալ էթնիկական խմբի ինքնապահպանման բնազդով, իսկ, Եպիսկոպոսյանի կարծիքով, հայերի էթնիկական ինքնությունն է ազդել խեթերի գենետիկական ինքնության վրա, ինչը բնորոշ է նաև շատ այլ էթնիկական խմբերի: Այս դեպքում, կարծում ենք, վճռորոշ դեր ունի լեզուն, որի օգնությամբ էլ դրսևորվում է հիշյալ ինքնությունը:

Ամփոփելով ասենք, որ, մեր կարծիքով, հայերն արդեն մ. թ. ա. 3-րդ հազարամյակում վերջնականապես ձևավորված են եղել որպես ա-

---

[22] Տե՛ս **Յու. Գաբրիելյան,** նշվ. աշխ., էջ 196:

[23] Տե՛ս **Luschan F.,** Völker, Rassen, Sprachen, Berlin, 2010, էջ 97-106:

[24] Տե՛ս **Епископосян Л. М.** Генетическая история этноса с позиции современной науки. ips.ras.ru

ռանձին էթնիկական խումբ և տարածված են եղել Հայկական բարձրավանդակի արևելյան և արևմտյան շրջաններում: Նման տարածումն էլ առաջացրել է նաև որոշակի գենային բազմազանություն, որը նկատում են կենսաբան-հետազոտողները: Անդրադառնալով այն գիտնականների տեսակետին, որ ինչպես հնդեվրոպացիների, այնպես էլ հայերի նախահայրենիքը գտնվել է Հայկական լեռնաշխարհում, և հայերն իրենց նախնական բնակության վայրից որևէ տեղաշարժ չեն կատարել՝ գիտականորեն չի հիմնավորվում, եթե նկատի ունենանք, որ հնդեվրոպացիների նախահայրենիքի՝ Առաջավոր Ասիայում գտնվելու վարկածը հաստատվում է բազմակողմանի փաստերով:

Բանալի բառեր - *հնդեվրոպական նախալեզու, հնդեվրոպացիներ, նոստրատիկ տեսություն, մոլեկուլային գենետիկա, գենետիկական հեռավորություն, հապլոխումբ, լեզվաաշխարհագրություն, բարբառային հնաբանություն, լեզվական կապեր, էթնիկական խումբ, լեզվական տարածք*

ЮРИЙ ГАБРИЕЛЯН – *Проблемы происхождения армян и армянского языка в сопоставлении лингвистических и генетических данных.* – С античных времён о происхожденнии армян и армянского языка выдвигались многочисленные гипотезы и теории, но единого мнения об этих проблемах в научных кругах до сих пор не существует. Главными причинами служат как разные подходы к данным вопросам, так и различные интерпретации соответствующих языковых, археологических, антропологических, этнографических и других фактов.

В статье путём сопоставления разного рода лингвистических и генетических (биологических) данных выявляются новые возможности решить указанные проблемы.

Ключевые слова: *индоевропейский праязык, ностратическая теория, молекулярная генетика, генетическое расстояние, гаплогруппа, лингвогеография, диалектный архаизм, языковые связи, этнические группы, языковой ареал*

YURI GABRIELYAN – *The Problems of the Origin of the Armenians and the Armenian Language with Comparison of the Linguistic and Genetic Data.* – There are several hypotheses and standpoints from the antique period about the origin of the Armenian language and the Armenians, about which has been no common opinion so far. The reason is that there are different approaches concerning these problems and varied interpretations of linguistic, archaeological, ethnological, anthropological and other corresponding facts as well.

In this article, an attempt is made to reveal new opportunities for solving the above-mentioned problems, by comparing the relevant linguistic and genetic (biological) data.

Key words: *Indo-European protolanguage, Indo-European forefatherland, nostratic theory, molecular genetics, linguogeography, genetic distance, dialect archaism, linguistic relations, haplogroup, linguistic area, ethnic group*